

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԶԱՐՈՒՅԻ ԶԻՎԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՄԻՖԱՍՏԵՂԾՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1988-1995 թթ.)**

**Ժ.01.06. - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան - 2014**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
**ՆԱՂԱՇ ՆԱՐԻՆԲԵԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

**ԱԼԲԵՐՏ ԱՐՄԵՆԱԿԻ ԽԱՌԱՏՅԱՆ**

բանասիրական գիտությունների թեկնածու

**ԱԼԱ ԱՐԱՄԻ ԽԱՌԱՏՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն

Ռուս-Հայկական /Սլավոնական/  
համալսարան:

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 11-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՂ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր



**Վ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

20-րդ դարավերջի հայաստանյան մանուլը հայ լրագրության պատմության կարևոր մի հատվածն է, որը հաստատապես կապված է անկախության գաղափարների տարածման, հայկական նոր պետականության ստեղծման հետ: Մեր կողմից իբրև հետազոտության նյութ ընտրվել են 1988-1995 թթ. լույս տեսած պարբերականների հրատարակումները, որոնց ուսումնասիրությունը այդ շրջանի հասարակական կյանքի, մշակույթի և քաղաքականության բնագավառներում նորանոր շերտեր բացելու հնարավորություն է ընձեռում: Մանուլը, որ մինչ այդ խորհրդային գաղափարախոսության հիմնական տարածողն ու զանգվածների գիտակցության մեջ սոցիալիզմի միջը կենդանի պահողն էր, նույն ջանասիրությամբ ձեռնամուխ եղավ դրա քայքայման գործին: Տոտալիտարիզմի նկատմամբ արշավանքը վերջինս սկսեց նրա խորհրդանիշներն «արմատախիլ» անելով, որոնցից ամենանշանավորը թերևս Լենինի արձանն էր՝ 1991թ. ապրիլի 13-ին<sup>1</sup>: Արձանի տապալումը, որ խորհրդանշական կերպով վկայում է նախկին հասարակարգի խոցելի դարձած պատումի մասին, վերահաստատում է մեկ այլ պատում՝ ներկայացնելու անհրաժեշտությունը: Ունենալով որոշակի պատմական սահմաններ, օգտագործման պայմաններ, սոցիալական բովանդակություն՝ նոր ներկայացվող պատումը ձգտում է դառնալ միջ՝ հաստատելու նոր իշխանության անցումը և ներկայացնելու նոր հասարակության արժեքները:

«Միջ» բառը մարդու գիտակցության մեջ սովորաբար զուգորդվում է հորինվածքի, հեքիաթի հետ: Մենք սովորել ենք առասպելները համարել հորինվածքներ, որոնք, իբր, շատ քիչ կապ ունեն իրականության հետ կամ էլ չունեն: Ժամանակակից մարդն իրեն համարում է բանական էակ, որը հեռու է միջերից:

Այն, որ ժամանակակից աշխարհը հարուստ չէ միջերով, ճիշտ է համարում Միրչա Էլիադեն: Սակայն եզրակացնում է. «Անհատական ընկալման մակարդակով միջը երբեք ամբողջովին չի անհետացել. այն հայտնվել է երազներում, ֆանտազիաներում, ժամանակակից մարդու ձգտումներում»<sup>2</sup>:

Նախնադարյան հասարակություններում միջը եղել է հասարակական կյանքի, մշակույթի ճշմարիտ հիմքը<sup>3</sup>, իսկ ժամանակակից հասարակությունում միջին շատ թե քիչ համարժեք է «կրթությունը»<sup>4</sup>: Սակայն կրթությունից բացի Մ. Էլիադեն նշում է ավելի ազդեցիկ միջոցներ, որոնց ազդեցությանը ենթարկվում է մարդը. դրանք արկածային պատմվածքների հերոսներն են, էկրանից սիրելի դարձած կերպարները և այլն: Ըստ տեսաբանի՝ միջի հիմնական հատկանիշներից է ողջ հասարակության համար «ստիպական մոդելների ստեղծումը»<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս «Հայք», 1991թ., թիվ 15 (65), 17 ապրիլի:

<sup>2</sup> Элиаде М. Мифы, сновидения, мистерии, Ваклер, 1996, стр. 27.

<sup>3</sup> Там же, стр. 22.

<sup>4</sup> Там же, стр. 32.

<sup>5</sup> Там же, стр. 33-34.

Ուրեմն, մի՞քը միայն միջնորդ չէ մարդու և իրականության միջև: Նրա օգնությամբ ձևավորվում է մարդու աշխարհայացքը, ստեղծվում «աշխարհի պատկերը», որի մեջ ապրում է ինքը՝ ինչ-որ տեղ ստանձնելով մարդուն ուղղորդողի կամ կառավարողի դեր: Մի՞քը կարող է գրականության, մեդիայի օգնությամբ ստեղծել միջոլոգիական իրականություն, որը մարդու կողմից կընկալվի որպես ճշմարտություն:

### **Թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը**

Հայ մամուլի անցած ուղու այս հատվածի քննությունը շատ կարևոր է այսօր՝ մի ժամանակաշրջանում, երբ անցյալն ամբողջովին քողազերծված և հասկանալի չէ, ինչպես թվում է, երբ ներկան կառուցելու համար նախկին մոտեցումները քննադատելու կարիք է զգացվում՝ հասկանալու համար, որ այն, ինչ «նոր, ազգային» է սահմանվում, իրականում իր մեջ երբեմն նախկին խորհրդային պատկերացումների կրկնությունն ունի:

Մի՞քը, լինելով «պատմության կողմից ընտրված խոսք» (Ռ. Բարտ), համարվում է արդյունավետ միջոց իրականություն կառուցելու համար: Այս առումով ուսումնասիրության համար հարուստ նյութ են տրամադրում 1988-1995 թվականները: Տվյալ շրջանում առաջ եկած խնդիրների մեծ մասը կապված էր ոչ միայն մի հասարակարգից մյուսին անցնելու, 70-ամյա խորհրդային ազդեցությունից դուրս գալու հետ, այլև գոյության նոր ուղիներ որոնելու, խորհրդայինից տարբեր՝ նոր ինքնություն սահմանելու նպատակ ունեյր:

Միֆաստեղծման գործընթացը մամուլում դիտարկելը կօգնի ավելի լավ հասկանալու հասարակական-քաղաքական գործընթացները, ամբողջական պատկերացում կազմելու պատմական տվյալ ժամանակաշրջանի մասին: Իհարկե, դրա համար կարևոր է ճիշտ ապակողովորել մի՞քը, վերականգնել սկզբնաղբյուրը, հնագույն արքետիպը, փորձել հասկանալ, թե ո՞ւմ է ձեռնտու դա այդ պահին: Մի՞քը կամ միֆաստեղծումը կարող են վտանգավոր դառնալ, երբ դրանք սկսում են օգտագործել որպես գործիք՝ կառավարելու կամ ուղղորդելու համար հասարակական գիտակցությունը: Ահա այդ պատճառով անհրաժեշտ է ժամանակակից միֆերի ապամիֆականացումը, կամ, ինչպես Ռ. Բարտն է առաջարկում, դրանց «քողազերծումը», «ապաքաղաքականացումը»:

Աշխատանքը իբրև օժանդակ ձեռնարկ կարող է օգտագործվել լրագրությանը նվիրված դասընթացներում: Օգտակար կարող է լինել միֆի տեսական հետազոտությամբ զբաղվողներին, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակներին:

### **Ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները**

Միֆաստեղծումը դիտարկելով որպես ժամանակակից մամուլի կարևոր նպատակ՝ փորձել ենք 1988-1995 թթ. լույս տեսած պարբերականների ուսումնասիրության միջոցով ճանաչել հայ իրականությունը տվյալ պատմական ժամանակաշրջանի միջոլոգիայի համատեքստում. պարզել, թե ի՞նչ միֆեր են կազմել խորհրդահայ գաղափարաբանության հիմքը, ինչպես՝ են սկզբնավորվում նոր միֆերը անկախության առաջին տարիներին, ի՞նչ միֆեր են

ստեղծում իշխանությունները՝ իրենց կայունությունն ապահովելու համար և այլն: Ըստ այդմ առաջադրվել են հիմնական խնդիրները.

1. Միֆի մասին տեսական հիմնարար հետազոտությունների և մեթոդների համակողմանի քննություն,

2. Խորհրդային, ապա նաև վերակառուցման շրջանի միֆերի քողազերծում,

3. Անկախության առաջին տարիների մամուլում միֆաստեղծման նոր ուղղությունների բացահայտում՝ տեսադաշտում ունենալով ազգային ինքնաճանաչողությանը, գոյապահպանությանը, հասարակության փոփոխվող արժեհամակարգերին ուղղված արդի մարտահրավերները,

4. Նոր ձևավորվող միֆերի հետ կապված մտահոգությունների մատնանշում (Արևոտքի ազդեցություն, Ճգնաժամային իրավիճակներ, հասարակության անկայուն բարոյահոգեբանական պահվածք և այլն),

5. Նորանկախ պետության մեջ միասնական միֆոլոգիայի ձևավորման շուրջ ի հայտ եկած խնդիրների, մասնավորապես գաղափարաքաղաքական տարածայնությունների վերհանում և հստակեցում:

### **Թեմայի մշակվածությունը և աշխատանքի գիտական նորույթը**

Միֆի վերաբերյալ անդրադարձներ հայաստանյան իրականության մեջ հանդիպում ենք հայ գրականագետների հրապարակումներում՝ Ժենյա Քալանթարյան, Ջավեն Ավետիսյան, Սեյրան Գրիգորյան, Հայկ Համբարձումյան, Սիրանույշ Դվոյան և այլք, ովքեր քննել են միֆը գեղագիտական տեսանկյունից<sup>6</sup>: Մասնավորապես ուշագրավ է Ա. Բեքմեզյանի «Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակույթում» (Երևան, 2007) գիրքը, որտեղ հեղինակը միֆերը դիտարկում է որպես արքետիպերի պրոյեկցիաներ:

Քաղաքագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության բնագավառի հետազոտողները նույնպես անդրադառնում են միֆ երևույթին: Վերջիններս իրենց ուսումնասիրություններում հիմնականում շեշտը դնում են միֆի՝ որպես քաղաքական գործչի իմիջի ձևավորման սոցիալ-հոգեբանական գործոնի վրա<sup>7</sup>:

---

<sup>6</sup> Տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Ուրվագծեր արդի հայ գրականության, Երևան, 2006: **Ավետիսյան Ջ.**, Նորագույն գրականության զարգացման միտումները, Երևան, 2002: Քրիստոմեությունը և հայ գրականությունը, Հոդվածների ժողովածու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2001 և այլն:

<sup>7</sup> Տե՛ս **Սելբոնյան Ն.**, Քաղաքական իմիջ, մեկնաբանություններ և ձևավորման սկզբունքներ, դասընթաց հասարակագետների համար, ԵՊՀ հրատ., Երևան, 2007: **Мелконян Н.**, Имидж как символическая структура. Классификация имиджеобразующих факторов, «Գիտական աշխատություններ: Հասարակական գիտություններ».-Պրակ 5, Երևան, Լինգվա, 2007, էջ 40-64: **Ասրիյան Է.**, թեկնածուական ատենախոսություն, Миф как социально-психологический фактор формирования имиджа политического лидера, 2008. **Аванесян Г., Асриян Э.** Национальные особенности политического мифа, «Հոգեբանություն և կյանք», թիվ 1-2, Երևան, «Ձանգակ-97», 2008, էջ 91-94 և այլն:

ԶԼՄ-ների միֆաստեղծ դերին մասնակի անդրադարձի ենք հանդիպում Վլ. Գովհաննիսյանի «Քաղաքական միջերը որպես տեղեկատվական պատերազմների միջոց» («21-րդ դար», թիվ 3 (21), 2008) հոդվածում:

Մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանը (1988-1995 թթ.) հարուստ նյութ է տրամադրում միֆաստեղծման տեսանկյունից՝ դառնալով սահմանագիծ «հնի» և «նորի» միջև: Այս դժվար ժամանակահատվածում տարբեր կարգախոսներով ձևավորվում էր հայաստանյան պարբերական մամուլը: Այն չէր կարող զերծ մնալ սոցիալ-տնտեսական, էթնոհոգեբանական, ներքին ու արտաքին քաղաքական գործընթացների ազդեցությունից: Մյուս կողմից ինքն էր ձևավորում հասարակական կարծիք և փորձում ուղղորդել այն:

Ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ մեկ ամբողջական աշխատության մեջ մամուլը քննվել է որպես միֆաստեղծ միջոց: Ելնելով այն սկզբունքից, որ միֆաստեղծումը ժամանակակից լրագրության հիմնական նպատակներից մեկն է այսօր, կարևորել ենք ոլորտի ուսումնասիրությունը: Ատենախոսության փաստական նյութն իր թեմատիկ բաժանումներով թույլ է տալիս պատկերացում կազմելու անկախության առաջին տարիների մասին, որն ինչ-ինչ առումներով նախանշեց նորանկախ պետության զարգացման հետագա ընթացքը:

### **Չետագոտության տեսական-մեթոդաբանական հիմքը**

Ատենախոսությունը գրված է լրագրության ուսումնասիրության արդի մեթոդներով և սկզբունքներով: Ըստ անհրաժեշտության կիրառված են նյութի հետազոտման պատմաքննական, համեմատական, համադրական, բովանդակային քննության, նշանագիտական վերլուծության, դիսկուրս վերլուծության, վերլուծական հոգեբանության մեթոդները<sup>8</sup>: Հաշվի է առնվել մամուլի պատմության մասնագետների ուսանելի փորձը: Համաշխարհային պատմության և քաղաքակրթության մեջ միֆի տեղն ու իմաստը ներկայացնելիս և մեկնաբանելիս ուսումնասիրվել են արևմտյան տեսաբանների մշակած տեսություններ և մեթոդներ:

### **Ուսումնասիրության փորձաքննությունը**

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնում: Աշխատանքի որոշ հատվածներ առանձին հոդվածներով տպագրվել են գիտական հանդեսներում և ժողովածուներում: Ատենախոսության թեմայով հրատարակվել է «Նոր միջերի ստեղծումը հայաստանյան մամուլում (1988-1995 թթ.)» մենագրությունը:

---

<sup>8</sup> Մեդիայի ուսումնասիրության մեթոդների մասին տե՛ս Paul Long, Tim Wall, Media Studies Text, Production and Context, Edinburgh Gate, Pearson Education Limited, 2009. Ina Bertrand, Peter Hughes, Media Research Methods, Audience, Institution, Texts, New York, Palgrave Macmillan, 2005.

## Կառուցվածքը և բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, արդիականությունը, պարզաբանվում են հետազոտության նպատակը, խնդիրները: Ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել նյութը մատուցել համակարգված մոտեցմամբ:

## Գլուխ առաջին

### Միֆը, նրա տեղը մշակույթի պատմության մեջ

Այս գլուխը բաղկացած է 4 ենթագլուխներից: Սահմանել ենք, թե ինչ է միֆը, քննել նրա զարգացման ընթացքն ըստ պատմական ժամանակների, ներկայացրել ենք թեմայի հետ կապված նշանավոր տեսաբանների աշխատանքներ և տեսություններ, ինչպես նաև միֆի վերլուծության հիմնական մոտեցումներն ու մեթոդները: Առաջին ենթագլուխը վերնագրել ենք «Միֆ. եզրաբանական և իմաստաբանական նշանակությունը», որտեղ համառոտ ներկայացրել ենք մշակութային այս երևույթի անցած ուղին, նրա տեսական կառույցի ընդհանուր կողմերը:

Ավելի քան երկու հազարամյակ մարդկության միտքն զբաղեցնող խնդիրներից է այն, թե ինչ է միֆը: Եզրույթը դիտարկվել է իբրև հումանիտար հասկացություն, որն ուսումնասիրվում է պատմության, մշակույթի, լեզվի, արվեստի, կրոնի, փիլիսոփայության և հոգևոր-մշակութային այլ դիտանկյուններից: Այն հիմնավորապես մտել է քաղաքական ու առօրյա ոլորտներ, գիտահանրամատչելի ու գեղարվեստական գրականություն<sup>9</sup>:

Համաաշխարհային պատմության և քաղաքակրթության մեջ միֆի տեղն ու իմաստը կոնկրետացվում է որպես հնագույն ժողովուրդների մտածողության ձև: Միֆը ներկայացնում է բնության երևույթների ֆանտաստիկ պատկերացումներ՝ հիմնված հեքիաթային չափազանցություններով ներկայացվող մարդկային գործունեության վրա՝ երբեմն հերոսացնելով նրան: Նախնադարում և հնագույն ժողովուրդների մոտ մարդն ընդհանրացրել է իր կյանքի փորձը, մտածո-

---

<sup>9</sup> Դատելով բառի ստուգաբանությունից՝ ունի հնդեվրոպական արմատ. «meudh-mudh», որը նշանակում է «հոգ տանել ինչ-որ բանի մասին», «նկատի ունենալ ինչ-որ բան» և այլն: Աստիճանաբար ընդարձակվել է եզրույթի նշանակությունը և հին հունական մշակույթում արդեն ունեցել է ավելի լայն ընդգրկում: Հոմերոսի աշխատություններում «միֆ» նշանակել է միտք, շարադրանք, հրաման, խորհուրդ, նշանակություն, կարծիք, նպատակ, հաղորդում, խոստում, խնդրանք և այլն: Հեսիոդոսի աշխատություններում «միֆը» մեծ կարևորություն ունեցող խոսք է, ընդ որում, այդ կարևորը կարող է ոչ միայն սուտ լինել, այլև ճշմարտություն (**Найдыш В.** Мифология, Учебное пособие, М., 2010, стр. 12):

ղությունը՝ կապված այն միջավայրի հետ, որում գործել է: Միֆի մեջ իրենց արտացոլումն են գտել նաև մշակութային, ծիսակրոնական, մոգական դրսևորումները:

Ժամանակակից միֆերը թե՛ բովանդակությամբ, թե՛ ձևով տարբերվում են հնագույն միֆերից: Դրանք արդեն պարզ պատմություններ չեն, այլ սոցիալական, քաղաքական, գիտական միֆեր, որոնք ունեն իրենց համապատասխան տեսությունները: Նախկինում եղել են անգիտակից գործունեության և երևակայության ազատ խաղի արդյունք: 20-րդ դարում, ըստ է. Կասիրերի, միֆերը ստեղծվում են համապատասխան պլանով, արհեստական ձևով՝ հմուտ «վարպետների» կողմից<sup>10</sup>: Դրանց առջև «մարդը շատ հաճախ նույնքան անզոր է, որքան վայրենին՝ բնության դեմ հանդիման»<sup>11</sup>, քանի որ այժմ բնության տարերքների փոխարեն սոցիալական ուժերի տարերքն է գերիշխում մարդու վրա: 20-րդ դարի միֆերում նորովի են իմաստավորվում մարդ-արտաքին շփարհի հարաբերությունները: Այս դեպքում մարդու համար շեշտվում է ոչ թե բնության հետ մարդու հարաբերակցության խնդիրը, այլ «անհատ-հասարակություն» կառույցը:

Միֆի գոյության իմաստը պարզաբանող տեսաբանները այն կարևորել են տարբեր տեսանկյուններով: Ռ. Բարտը ներկայացնում է միֆը հետևյալ հատկությամբ. այն «պատմական երևույթներին տալիս է բնական կարգավիճակ, պատմական փաստերը բարձրացնում հավերժականի աստիճանի»<sup>12</sup>: Միֆը դա անում է՝ առանց ժխտելու երևույթները: Ընդհակառակը, «նրա գործառույթը դրանց մասին խոսելն է: Բայց նա մաքրում է դրանք, դարձնում անվնաս, հիմնավորումներ է գտնում հավերժական ու անփոփոխ բնության մեջ, դրանց պարզություն է հաղորդում»<sup>13</sup>:

«Միֆը խոսք է, արտահայտություն, ասույթ: Միֆը հաղորդակցական համակարգ է, հաղորդագրություն: Յետևաբար միֆը չի կարող լինել առարկա, ըմբռնում կամ գաղափար: Այն նշանակության միջոցներից մեկն է: Միֆը ձև է»<sup>14</sup>: Սակայն, ինչպես նշում է Ռ. Բարտը, այդ ձևն ունի պատմական սահմաններ, օգտագործման պայմաններ, սոցիալական բովանդակություն: Ե՛վ հնում, և՛ այժմ միֆը կարող է իր հիմնավորումը գտնել միայն պատմության մեջ, քանի որ միֆը խոսք է՝ ընտրված պատմության կողմից, այն չի կարող ծագել իրերի «բնությունից»:

Այսպիսով՝ միֆերը քաղաքակրթության և մշակութային կյանքի հնագույն շերտն են: Ժամանակն առաջ է գնում, բայց միֆերն առաջվա պես գրավում են

---

<sup>10</sup> Кассирер Э. Техника современных политических мифов, Политологоя. Хрестоматия, Москва, 2000, стр. 581-582.

<sup>11</sup> Այս մասին տե՛ս Բեքմեզյան Ա., Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում, Երևան, 2007, էջ 20-21:

<sup>12</sup> Барт Р. Избранные работы. Семиотика. Поэтика. М., Прогресс, 1994. стр. 111-112.

<sup>13</sup> Там же.

<sup>14</sup> Там же, стр. 72.

մեր ուշադրությունը: Դրանց մենք անդրադառնում ենք ամեն անգամ, երբ ցանկանում ենք պարզ ու պատկերավոր լեզվով հասկանալ անհմանալի թվացող իրողությունների խորքում թաքցված գաղտնիքները:

**«Միֆի զարգացման ընթացքը ըստ պատմական ժամանակների»** ենթագլխում ներկայացրել ենք միֆի անցած ճանապարհը:

Հնագույն շրջանում դրանք ուղղված են եղել կյանքի գաղտնիքները բացահայտելուն, այն բանին, թե ինչպես է առաջացել մարդն ու ինչ առաքելություն ունի նա երկնքի տակ, արդյո՞ք մարդը տերն է երկրի, թե ինքն իր բնույթի ու էության ստրուկն է: Այս երկընտրանքները մղել են մարդուն ինքնաճանաչողության<sup>15</sup>:

Միջնադարը, որ ձեռք էր բերել կրոնական բովանդակություն, ամեն ինչ ծառայեցնում էր իր գաղափարախոսությանը: Քայքայվում էին անտիկ միֆերը:

Միֆի նկատմամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարում: Սկսեցին գործել առանձին դպրոցներ՝ լեզվաբանական (Մալինովսկի), փիլիսոփայական (Կասիրեր, Լոսև), հոգեբանական (Ֆրեյդ, Յունգ), նշանագիտական ու կառուցվածքաբանական (Լևի-Ստրոս, Բարտ), սոցիոմշակութային ու ծիսաարարողակարգային (Մ. Էլիադե և այլք)<sup>16</sup>:

20-րդ դարում տեսական միտքը սկսում է քննության առնել մարքսիզմի դիրքորոշումը անհատ-հասարակություն հարաբերության նկատմամբ: Մասնավորապես մարքսիզմ-լենինիզմ բանաձևը դիտվում է իբրև վախճանաբանական միֆ՝ «բռնության աշխարհը քանդելու և նոր աշխարհի կառուցելու մասին»: Ինչ վերաբերում է Մարքսին, Մ. Էլիադեն գրում է. «Մարքսն օգտագործեց միջերկրածովյան-ասիական աշխարհի միֆը ճշմարիտ հերոս-փրկչի մասին, որը տեսավ պրոլետարիատի մեջ, ու տառապանքով փոխվելու էր աշխարհի գոյաբանական կառույցը:...Իրականում մարքսյան անդասակարգ հասարակարգը և նրա շնորհիվ ակնկալվող պատմական լարվածության վերացումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ միֆ ոսկե դարի մասին, որն իր բազում ավանդույթներով հատուկ է պատմությանը թե՛ որպես նրա սկիզբ, թե՛ որպես ավարտ»<sup>17</sup>:

20-21-րդ դարերում համաշխարհային և հատկապես ամերիկյան իրականության մեջ միֆերի զարգացման դինամիկան իրեն գտավ հասարակական գիտակցության ծրագրավորման ցանցում: Այս առումով միֆերին մեծ տեղ է հատկացնում ամերիկացի մեդիաքննադատ Յերբերտ Շիլլերը: Ըստ նրա՝ ամերիկյան զանգվածային գիտակցությունը ձևավորում են հինգ միֆեր, որոնք ընկած են մաս մյուս զարգացած և զարգացող հասարակարգերի հիմքում: Դրանք են անհատի և անձնական ընտրության, չեզոքության, մարդու անփոփոխ

---

<sup>15</sup> Сучков Б. Роман и мир, Иностранная литература, 1968, № 4, стр. 228.

<sup>16</sup> Միֆի հանգամանալից բնութագրումներն ըստ դարաշրջանների տե՛ս Найдыш В. Мифология. Учебное пособие, М., 2010. Мелетинский Е. Поэтика мифа, М. 2000. Шинкаренко В. Смысловая структура социокультурного пространства, М. 2005. Բեքմեյսյան Ա., Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում, Երևան, 2007:

<sup>17</sup> Элиаде М. Аспекты мифа, М., 1996, стр. 180.

ելության, սոցիալական կոնֆլիկտների բացակայության, ՁԼՄ-ների բազմակարծության մասին միֆերը:

Այսօր մեր կյանք են ներխուժում նոր մշակույթի և աշխարհակարգի մասին միֆեր: Խոսքը գլոբալացման մասին է, ինչը հրատապություն ստացավ 1990-ականներին: Մարիլանդի համալսարանի պրոֆեսոր Սարջոյի Ֆերգուսոնը գլոբալացման միֆոլոգիայի մեջ հաստատված 7 միֆեր է նշում: Դրանք են՝ «Մեծը լավագույնն է», «Շատն ամենալավն է», «Ժամանակը և տարածությունն անհայտացել են», «Գլոբալ մշակութային նույնականություն», «Փրկենք Երկիր մոլորակը», «Ամերիկյան հեռուտատեսության միջոցով դենոկրատիայի արտահանում» և «Նոր աշխարհի կարգը»<sup>18</sup>:

Այսպես, միֆոլոգիան կամ միֆերի նկատմամբ վերաբերմունքն ընդհանրապես պատմական տարբեր ժամանակների հետ քայլող անընդհատ գործընթաց է: Արդի շրջանում, երբ գլոբալ փոփոխություններ են կատարվում աշխարհում, երբ այն բռնկվել է տարբեր ճգնաժամային իրավիճակներով, միֆերի նկատմամբ նոր մոտեցումների անհրաժեշտություն է առաջացել:

**«Միֆի վերլուծության հիմնական մեթոդներն ու մոտեցումները»** ենթազբխում անդրադարձել ենք միֆի և միֆաստեղծման հետազոտման մեթոդաբանական և տեսական մոտեցումներին: Այստեղ կարևորել ենք ուղղությունների մի շարք, որոնց օգնությամբ առանձնանում են մշակույթում միֆի գոյության տարբեր ոլորտներ և ձևեր, ինչպես նաև նրա՝ հանրային գիտակցության վրա ազդելու օրինաչափությունները և գործառույթները:

Միֆի վերլուծության խորհրդապաշտական դպրոցի հիմնադիրն է մարդաբանական փիլիսոփայության նշանավոր տեսաբան Է. Կասիրերը: Նա գտնում է, որ բացի ֆիզիկական բազմակողմանի համատեղումից, մարդն ապրում է նաև խորհրդանշական համատեղման պայմաններում, որի բաղադրամասերն են լեզուն, դիցաբանությունը, արվեստը, կրոնը: Հենց դրանցով էլ ստեղծվում է խորհրդանշանային ցանցը<sup>19</sup>: Միայն բանականությունը քիչ է ընդգրկվելու համար մարդու մշակութային կյանքի բազմազանության մեջ: Ըստ դրա էլ Կասիրերը մարդուն *animal rationale*-ի փոխարեն որակում է *animal simbolicum*: Կենդանական աշխարհի համար նա սիմվոլները համարում է որպես ազդանշանային, իսկ մարդկային մշակույթի ողջ զարգացումը կապում խորհրդանշանային մտածողության հետ:

Միֆը ձևաբանական և իմաստաբանական տեսանկյունից վերլուծող տեսաբանների շարքում (Լևի-Ստրոս, Ֆուկո և ուրիշներ) առանձնացրել ենք Ռոլան Բարտին: Նա առաջիններից էր, որ ուշադրության արժանացրեց սպառողական մշակույթը, սեմիոլոգիան ընդունեց որպես գիտություն, որով փորձեց քողազերծել ժամանակի միֆերը:

---

<sup>18</sup> Ferguson M., The Mythology about Globalization, «European Journal of Communication», Communication Theory and Research, edited by Denis Mc Quail, Peter Golding and Elsdie Bens, SAGE Publications LTD, London, Thousand Oaks, 2005, p. 26.

<sup>19</sup> Կասիրեր Է., Էսսե մարդու մասին, Եր., 2008, էջ 45- 47:

Ռ. Բարտը նշում է, որ պատմական գիտությունների հետ միֆոլոգիայի առնչությունները հստակեցնում են նաև գաղափարաբանության և միֆոլոգիայի միջև եղած կապը: «Միֆն այսօր» էսսեի առանցքային հասկացությունը հենց գաղափարախոսությունն է, ինչը սերտորեն առնչվում է մեդիատեքստերի ուսումնասիրության հետ: Տեղին է հիշել նաև ֆրանսիացի մարդաբան հետազոտող Կլոդ Լևի-Ստրոսի ասույթը. «Ոչինչ այնքան մեզ չի հիշեցնում միֆոլոգիան, որքան քաղաքական գաղափարախոսությունը: Գուցե թե մեր հասարակության մեջ վերջինն ուղղակի փոխարինել է առաջինին»<sup>20</sup>:

Ժամանակի մեջ ստեղծված միֆերը բացահայտելու և հասկանալու, ենթագիտակցորեն մարդկանց վարքի կախվածությունը միֆոլոգիական կերպարներից բացատրելու համար կարևոր է անդրադարձը վերլուծական հոգեբանության մեթոդների: Այս առումով կարևոր է հասկանալ յունգյան կոլեկտիվ անգիտակցականի կառուցվածքը, ինչպես և «արքետիպ» ու «անգիտակցականություն» հասկացությունների ըմբռնումը:

Յունգյան արքետիպերի տեսությանն իր ուսումնասիրություններում անդրադարձել է նաև կրոնի և մշակույթի հետազոտող, պատմաբան, միֆի տեսաբան Միրչա Էլիադեն՝ անվանելով դրանք «սրբազան մոդելներ»: Ուսումնասիրելով թե՛ հին, թե՛ նոր ժամանակների ենթատեքստերում գործող միֆերը, Մ. Էլիադեն դրանց համար առանձնացրել է մի ընդհանուր տարր, որն է՝ «ցիկլային ժամանակը»: Էլիադեն միֆերին ազգակից է համարում գոյաբանությունը և ըստ դրա գտնում, որ այն պատմություն է անցյալի արժանահիշատակ «սկիզբների սկզբում» կատարված իրադարձությունների մասին<sup>21</sup>:

Օգտագործելով վերոնշյալ մեթոդները, տեսությունները և տեսաբանների ուսումնասիրությունները, ատենախոսության հաջորդ ենթազվիտում՝ «Ուսումնասիրվող պատմական ժամանակահատվածը միֆոլոգիայի համատեքստում», ներկայացրել ենք հայ ժողովրդի համար բախտորոշ պատմական ժամանակաշրջանը՝ 1988-1995 թվականները:

Ստեղծված պատմական նոր իրադրության համատեքստում՝ «մենքի» և «ուրիշի» տարբերակման պայմաններում կատարվում է Ռուսաստանի «քաղաքակրթող առաքելության»<sup>22</sup> միֆի փլուզումը, որը վաղուց էր նախապատրաստվել:

Այս շրջանում ժողովրդի ուշադրությունը սևեռված էր Ղարաբաղյան հարցի վրա: «Միացումը», որն իր մեջ ամփոփում էր միֆին հատուկ իդեալներ, դառնում է առաջնային պահանջ: Իսկ «Ղարաբաղ» կոմիտեն վստահորեն իր վրա է վերցնում առասպելական հնարավորություններով օժտված միֆական հերոսի դերը: Վերաիմաստավորված միֆի՝ «Ղարաբաղ» կոմիտեի շուրջ ստեղծված

<sup>20</sup> Клод Леви-Строс, Структурная антропология, М., 2001, стр. 217.

<sup>21</sup> Элиаде М. Мифы, сновидения, мистерии, М., 1996, стр. 22.

<sup>22</sup> Տե՛ս նաև Шинкаренко В. Смысловая структура социокультурного пространства, М., 2005, стр. 25.

<sup>22</sup> Բայադյան Յ., Կովկասի ռուսական պատկերը, «Չեռք», 14 սեպտեմբերի, 2009:

միֆական մթնոլորտը ձգվում է Արցախից մինչև Երևանի թատերական հրապարակ:

1988-ից սկսվող պատմական նոր ժամանակաշրջանում ակտիվության մղող շարժման հաջորդ հարցը վերաբերում էր գոյապահպանությանը: Այս համապատկերում ատոմակայանի փակման մասին կառավարության խոստումների և վարած գործունեության հակասությունների արանքում ստեղծվում էին «տեխնոլոգիական» միֆեր, որոնց կյանքը կարճատև էր: Նման միֆեր էին ստեղծվում միտինգների ժամանակ՝ հրապարակներում, երբ ԽՍՀՄ-ում ընթանում էր պետությունների անկախացման գործընթացը: Դրանցից մեկն այն մասին է, «թե մենք (այսինքն՝ Հայաստանը-Ձ. Ս.) ենք պահում Ռուսաստանին՝ մեր կառուչուկով, ոսկով, մոլիբդենով...»<sup>23</sup>: Սակայն կար նաև հակառակ միֆը, ըստ որի՝ «Ռուսաստանը վատ էր ապրում այն պատճառով, որ կերակրում էր մյուս պետություններին»<sup>24</sup>:

Էթնոհոգեբանական փոփոխությունների հիմքի վրա ծնվեց «համազգային» մտածողության գերապատվությունը, որը զանգվածայնացնելու գործը իրեն վերապահեց «միացման» պահանջատիրությամբ միֆականացված «Ղարաբաղ» կոմիտեն, և ճիշտ միֆափոխակերպ ճանապարհով թե՛ անվանափոխվեց (ՀՀԸ), թե՛ փոխեց գործունեության ընթացքը (անկախություն): Մինչև 1992 թվականը «համազգային» գերապատվություն տվող տարիներ էին: Նույն կուսակցության (ՀՀԸ) հիմքի վրա ձևավորվեց նոր իշխանությունը: 1992-ից սկսած այս միֆն սկսեց տեղի տալ: «Շարժում, որ այլևս չի շարժվում» բնորոշումը<sup>25</sup> ապամիֆականացման ևս մեկ լավ ներկայացում է: 1993 թ. հունիսին արդեն հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ՀՀԸ 5-րդ համագումարում դեռևս «համազգային» անունը կրող, բայց միֆազրկված շարժման դերը բացառեց իշխանապետության մեջ<sup>26</sup>, հաստատելով, որ արդեն վերացել են դրանով դիսկուրս ստեղծելու ժամանակները:

Այսպիսով՝ 1988-1995թթ. պատմական ժամանակաշրջանում առկա էին հետևյալ միֆափոխակերպումները՝

1. Միֆի կործանում՝ ապամիֆականացման, քայքայման միջոցով,
2. Միֆի վերաիմաստավորում կամ վերարժևորում՝ հին միֆի կաղապարով նոր իմաստների ներդրման միջոցով,
3. Նոր միֆերի ստեղծում՝ իրականության համատեքստում:

---

<sup>23</sup> Տե՛ս Ասատրյան Նվարդ, Հրանտ Մաթևոսյան. և մենք նորից իրար կգտնենք բանականության հրապարակում, «Երկիր Նաիրի», 1994, թիվ 41:

<sup>24</sup> Նույն տեղում: Այս մասին տե՛ս նաև Հովհաննիսյան Վ., Քաղաքական միֆերը որպես տեղեկատվական պատերազմների միջոց, «21-րդ դար», թիվ 3 (21), 2008:

<sup>25</sup> Չատիկյան Ա., Շարժում, որն այլևս չի շարժվում, «Անկախություն», 1992, թիվ 18 (229), 20 փետրվարի:

<sup>26</sup> Լևոն Տեր-Պետրոսյան, «Մեր սերնդի պարտքը հայոց պետականության կայացումն է, Հայաստանի բարգավաճումն ու հզորացումը...», «Հայաստանի Հանրապետություն», 1993թ., թիվ 127(731), 29 հունիսի:

## **Գլուխ երկրորդ**

### **Հին միջերի կործանումը մամուլում**

Ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնք նվիրված են վերակառուցման և խորհրդային միջի կործանմանը, նաև հին և նոր միջերի պայքարի ընթացքում ի հայտ եկած խնդիրների քննարկմանը: Ներկայացրել ենք հասարակական գիտակցությունն ուղղորդելու համար մամուլի կողմից ստեղծված և օգտագործված տարաբնույթ միջերը: Այս իրողությունը հատկապես ակնառու դարձավ գորբաչովյան վերակառուցման տարիներին, երբ մամուլն աշխատում էր «մոդեռնացնել խորհրդային միջը»: Սակայն հենց նույն վերակառուցման ընձեռած հրապարակայնությունից էլ սկսվեց խորհրդայինի ապամիջականացման գործընթացը: Նախ՝ կործանվեցին խորհրդային քաղաքացիական միջերը, ապա՝ առաջնորդի միջը, որը կարևոր տեղ ուներ խորհրդային առասպելաբանության մեջ: Սակայն նոր միջերի ստեղծումը առանց խոչընդոտների չէր. միջ-հակամիջ պայքարն ընթանում էր հանրապետությունում ծայր առած ճգնաժամային իրավիճակում, երբ մամուլը, մի կողմից տարբեր հաղորդագրություններ օգտագործելով, պատերազմի ակազանգ է հնչեցնում, մյուս կողմից վեր հանում մտահոգությունները՝ կապված Արևմուտքից ներմուծված նոր արժեքների հետ:

**«Վերակառուցումը և հին միջի քայքայումը մամուլում»** ենթագլխում ներկայացնում ենք, թե ինչպես, օգտագործելով վերակառուցման ընձեռած հնարավորությունները, մամուլը ցույց տվեց խորհրդային, ինչպես նաև վերակառուցման միջերի սնանկությունը:

Մամուլը, որ մինչ այդ խորհրդային գաղափարախոսության, միջերի հուսալի ու անդավաճան հաղորդիչն էր, նույն ջանասիրությամբ ձեռնամուխ եղավ դրանց քայքայմանը: Այս ճանապարհը, սակայն, հարթ չէր. տեղական կենտրոնական մամուլը վերջին ճիգերով աշխատում էր կենդանի պահել «երջանիկ ապագայի» կամ կոմունիզմի միջը:

Խորհրդային Միության պայմաններում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀՍՄԳ Գերագույն Սովետի և Մինիստրների խորհրդի օրգան «Սովետական Հայաստան» թերթը, ղեկավարվելով կենտրոնից, աշխատում է «մասսաներին» (ժամանակի մոդայիկ բառերից) տանել վերակառուցման ճանապարհով: «Սենք լրիվ իրավունքով կարող ենք ասել, որ դա պատմական ընտրություն էր»,- գորբաչովյան այս տեսակետը բարձրաձայնում է թերթը<sup>27</sup>: Կենտկոմի օրգան և խոսափող նույն թերթը վերակառուցման առաջամարտիկներ է փնտրում՝ սոցիալական միջավայրում խորհրդային միջը պահելու համար: Դրանք առաջավոր բանվորներ էին, վարպետներ, բրիգադիրներ, շինարարներ և այլք:

Նույն ժամանակահատվածում կային պարբերականներ, որ սկսել էին սոցիալիզմի միջերի քայքայման գործը: Այդ առումով հատկանշական են «Ուզնի» հանդեսի հրապարակումները: Բյուրոկրատիայի, կաշառակերության և այլ

---

<sup>27</sup> «ՏԱՍՍ, ՍՄՄ Գերագույն սովետի արտահերթ նստաշրջան», «Սովետական Հայաստան», 1988, թիվ 239 (20560), 2 հոկտեմբերի:

երևույթների վերհանումն ու քննադատությունը «ՈՂՈՒ» էջերում կատարվում են ժանրային ու պատկերային տարբեր միջոցների օգտագործմամբ: Այդ ամենն արվում է խորհրդային 70-ամյա միջի քողագերծման նպատակով:

Այսպիսով, քայքայվող խորհրդային սոցիալիստական «ավագաքարի» վրա կառուցվող նոր՝ վերակառուցման միջը դատապարտված էր շարունակվելու, ուստի կործանվեց՝ առիթ տալով մտորելու, որ «վերակառուցումը մեզ ժառանգած կառույցի նորոգումը և հարդարումը չէ միայն և ոչ էլ կից ու օժանդակ շինությունների հավելումը/.../: Վերակառուցել է պետք մեր ներքին կառույցը, մեր հոգին, միտքը, խղճի ու հավատի մեր մատուռները, մարդասիրության ու գթասրտության մեր ընկալիչները...»<sup>28</sup>: Ինչպես վկայում է Ա. Յուլաձեն, վերակառուցումը դարձավ խորհրդային միջի քայքայման պատճառներից մեկը. ««Վերակառուցումը» խճճվածություն մտցրեց խորհրդային միջիերի մեջ, այն կորցրեց իր ամբողջականությունը, հետևաբար և՛ ազդելու ուժը»<sup>29</sup>:

Հին միջի (խորհրդային, սոցիալիստական համակարգի) հետ ապամիջակա-նացվեցին և կործանվեցին նրա «քաղաքացիական միջերը» (որակումը՝ Գ. Բիրլայինի): Այս կարգի մեջ իր կարևոր տեղն էր զբաղեցնում խորհրդային ռուբլին:

Խորհրդային կայսրության քայքայումը, վախճանը մամուլը ցույց էր տալիս՝ կործանելով նրա սինվոլները, վարկաբեկելով առաջնորդների միջակա-ն կերպարները: Այս հնարքին դիմում էին գրեթե բոլոր պարբերականները: Հատկանշական է, որ երևույթը բնորոշ էր ոչ միայն խորհրդային կայսրության կործանման սկզբնական շրջանին, այլև մեր կողմից ուսումնասիրված (1988-1995 թթ.) ժամանակահատվածին: Մամուլը դա արեց առանձին հոդվածների, պատկերագրողումների, անգամ անեկդոտների միջոցով:

70 տարի խորհրդային Միության «մենքը» իր սեփականը համարող, իրեն այդ ընդհանուր «մենքի» հետ նույնացնող ժողովուրդը փորձում էր առանձնանալ, սահմանել և ներկայացնել իր սեփական «մենքը», որը տարիներ շարունակ սահմանվել էր Ռուսաստանի կողմից, և որի՝ խորհրդային ազգերին տիրապետելու և նրանց նկատմամբ իշխանությունը պահպանելու եղանակները ժամանակակից տեսաբանն անվանում է «ռուսական-խորհրդային Օրինետալիզմ»<sup>30</sup>:

Ինքնորոշվելու, օտարի լծից ազատագրվելու, թռիչքի պատրաստվող միջի առաջ, սակայն, պատմությունը խոչընդոտներ էր նախապատրաստել: Այդ խոչընդոտներից խոշորագույնն էր կորստի զգացողությունը: Մեր կողմից դիտարկ-վող շրջանում մամուլի ստեղծած միջակա-ն միջավայրում իրենց հաստատուն տեղն են զբաղեցնում կորստի զգացողության հիմքի վրա ծնված կամ դիմա-փոխված միջերը: Այս իրողություններն օգտագործելով՝ խորհրդային քարոզ-

---

<sup>28</sup> Միքայելյան Մ., Ըստ պատկերի մերում, «Սովետական Հայաստան», 1988, թիվ 262 (20583), 3 նոյեմբերի:

<sup>29</sup> Ըլաձե Ա. Политическая мифология. Разрушение мифов: опыт «перестройки» [www.novsu.ru](http://www.novsu.ru)

<sup>30</sup> Բայդյան Հ., Մշակութային ապագադուրացման հարցը, «Հետք», 2008թ., 29 դեկտեմբերի:

չամբեբենան փորձում էր կայուն պահել իր գաղափարախոսությունը և իրականությունը ներկայացնել սեփական մեկնաբանություններով:

Հաջորդ ենթագլխում, որ վերնագրված է «**Չնի և Նորի միֆապայքարը մամուլում**», նախ անդրադարձել ենք Նոր ձևավորված «Ղարաբաղ» կոմիտեի և 70 տարվա փորձ ու պատմություն ունեցող կոմկուսի միֆապայքարին:

«Ղարաբաղ» կոմիտեն, որ իր վրա էր վերցրել ժողովրդի ազատարարի դերը, Նոր էր ծնվել: Որպես հակոտնյա միֆ՝ նրա առաջնորդությունը անընդհատ խոչընդոտվում էր հնի կողմից: Մամուլը կազմակերպում, օգնում էր «հանրային ապամիֆականացման» երկկողմանի գործընթացներին: Մի կողմում «կենտրոնական տիրոջը հավատարմագրված կուսակցական կատարածուներն էին»<sup>31</sup>, մյուս կողմում՝ ժողովրդական զարթոնքի շեփորահար «Ղարաբաղ» կոմիտեի ներկայացուցիչները կամ «տղաները»: Առաջինները անկախամալու դեպքում «սովահարության սարսափն են կանխագուշակում», սակայն այս վերաբերմունքը հակառակ կողմի դիրքերից գնահատվում է որպես հնին վերադառնալու, կորցրած իշխանությունը գտնելու փորձ<sup>32</sup>:

Չին և Նոր միֆերի պայքարը ծավալվում էր հանրապետությունում ծայր առած ճգնաժամային իրավիճակում: Սակայն մամուլը հրապարակումներով ուղղորդում է կենցաղային դժվարությունները. «Մենք ոտքի ենք ելել ոչ թե օճառի, ծխախոտի պրոբլեմները լուծելու համար, այլ նախ և առաջ մարդկային և ազգային արժանապատվության մեր հասանելիքին տեր կամզնելու համար»<sup>33</sup>, - նշում է «Ավանգարդը»՝ միաժամանակ խորհրդային անցյալից հիշողություններ պատմելով «վաղվա օրվա համար»:

«Երկիրն» ահագանգում է հոգևոր Հայրենիքի կորստի, անդարձ կորուսյալ հայրենական արժեքների, հոգևոր աղքատության ու գաղափարական չունևորության մասին, ինչպես և այն մտավորականների, որոնց համար գործելակերպ է դարձել «Նախ՝ հացիվը...»<sup>34</sup>: Ժամանակի մամուլը լի է հայ մարդու ազգային հոգեբանության ու մտածողության խաթարումը շեշտող հոդվածներով, որտեղ ավելի ակնհայտ է դառնում անկման իրողությունը:

Այս իրավիճակում «Սովետական Հայաստանից» անցում կատարվեց դեպի «Հայաստանի Հանրապետություն»: Ազատություն, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ... սրանք Նոր միֆեր են, որոնց հիման վրա պետք է կառուցվի Նոր հասարակությունը: Այս առիթով մտահոգություն է հայտնում մամուլը, նշելով, թե փորձ է արվում հայոց պետությունը կառուցել ամերիկյան

---

<sup>31</sup> Հարությունյան Ս., Աղետի գոտին կործանում է կաշառակերությունը, «Հայք», 1991 թ., թիվ 13 (63), 3 ապրիլի:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> Գալոյան Ս., Հիշողություններ վաղվա օրվա համար, «Ավանգարդ», 1990թ., թիվ 144 (10395), 19 դեկտեմբերի:

<sup>34</sup> Պետրոսյան Ղ., Մտավորականաթափման գործընթաց, «Երկիր», 1991թ., դեկտեմբեր 27:

սկզբունքներով, որի հիմքը մարդու իրավունքներն են: «Սեզ հուզում է ոչ թե պետության կառուցումը, այլ ազգային պետության կառուցումը»<sup>35</sup>:

Հնի և նորի միջական պայքարը, նոր միջերի ձևավորումը մամուլում ընթանում է նման պայմաններում ու մտահոգությունների համատեքստում:

## Գլուխ երրորդ

### Նոր միջերի ստեղծումը մամուլում

Առաջին ենթագլխում՝ «Գոյապահպանական խնդիրները և դրանց հետ կապված միջերի ստեղծումը մամուլում», քննության են առնվում 1988 թվականին սկսված գոյապահպանական շարժման հիմնախնդիրները, որոնց հետ կապված բազմաթիվ միջեր էին ստեղծվում թերթերում:

Երկրաշարժից հետո անընդհատ շրջանառվում էր Հայաստանի՝ սեյսմիկ գոտի լինելու փաստը, հրատապ էր դարձել ԱԷԿ-ի խնդիրը: Սուվեգայիթյան ողբերգությունը, ապա տարերային աղետի պատճառած հսկայական կորուստները հանրապետությունում ստեղծել էին կորստի ու վախի մթնոլորտ, որ զանգվածներին մղում էր գոյությունը պահպանելու երաշխիքներ ունենալ: Այդ երաշխիքների շուրջ էին կազմակերպվում ցույցերն ու միտինգները:

1989-1993 թթ. մամուլի հրապարակումները թերթելիս ակնհայտ երևում է, թե ինչպես գոյապահպանության «անվեհեր» մարտիկները անհրաժեշտ պահին, նույն միջն «առևանգելով», պայքարի մի դաշտից մյուսն են տեղափոխում: Սկզբում այն գործում էր մթնոլորտի աղտոտվածության, ֆիզիկական փաստացի գոյության ապահովման, 4-5 տարի հետո՝ ազգային տնտեսությունն անկախ վարելու դիսկուրսի օգտին: Այս առումով հատկանշական է «Հայքի» դիրքորոշումը, որ տարիներ հետո (1993-ին) կատարվածը մեկնաբանում է՝ «գիտակցված սխալն անհրաժեշտություն էր»<sup>36</sup>: Իսկ «գիտակցված սխալը» վերաբերում է այն բանին, որ 1993 թ. ՀՀ Գերագույն խորհուրդն ուժը կորցրած է ճանաչել 1989 թ. Հայկական ԱԷԿ-ի աշխատանքի դադարեցման մասին որոշումը և նույն թվականի ապրիլից սկսել նրա վերագործարկման աշխատանքները:

Նոր միջերի ստեղծման և հաստատման ճանապարհին ակնհայտ էին փոփոխությունները բարոյահոգեբանական արժեքային համակարգում: Երկրաշարժը, արցախյան գոյամարտը, երկրում ստեղծված սոցիալ- տնտեսական ծանր պայմաններն ավելի խիստ զգացնել տվին, երբ առաջացավ ջեռուցման, ձմեռային ցրտին դիմակայելու հարցը: Խոսքը հատկապես 1993թ. սկսված զանգվածային ծառահատումների մասին է: Բնության ոգեղենության զգացողությունը ոտնահարվել էր ամենամասիտ ձևով, որովհետև ցրտի ու սառնամանիքի պայմաններում հատված, «անշնչացած» ծառը վառելիք էր, ջերմության աղբյուր:

---

<sup>35</sup> «ՀՀԸ-ն, ՀՀ ԳԽ-ն ու նախագահը ազգային գաղափարախոսություն չունեն», «Երկիր», 1993, թիվ 67 (408), 14 ապրիլի:

<sup>36</sup>Նազարով 3., Համաշխարհային բանականություն, «Հայք», 1993 թ., թիվ 58(211), 27 հոկտեմբերի:

«Ավանգարդը» հարցին անդրադառնում է ողջ 93 թվականի ընթացքում: Թերթը մեկ անգամ ևս հիշեցնում է հինավուրց իմաստությունը. «Նպատակիդ հասել ես, եթե տուն ես կառուցել, երեխա ես ունեցել, ծառ ես տնկել»<sup>37</sup>: Արտաբուստ աշխարհիկ թվացող այս իրադարձությունները, ըստ Մ. Էլիադեի, իրենց մեջ դեռևս պահում են միջուղօրհական կառուցվածքը և գործառույթները: «Տուն կառուցելը, երեխա ունենալը, ծառ տնկելը» խորհրդանշում են նոր կյանքի սկիզբը, այսինքն՝ լիակատար վերածնունդը<sup>38</sup>: Այս պարագայում ժամանակի անհավը չի կատարում իր ցիկլային պտույտը, սպանվում են միջը, ձգտումը դեպի *incipit vita nova* (նոր կյանքի սկիզբ)<sup>39</sup>:

Սակայն «Հայքը», հասկանալի պատճառներով, խնդրին մոտենում է նաև այլ տեսանկյունից: Նրա համար ծառասպանությունը պետական իշխանության կառավարման ճանապարհին չարիքների փոքրագույնն է, որը գոյություն ունի խորհրդային տարիներից ժառանգություն մնացած անտառային տնտեսության անկազմակերպ ու թերություններով լի լինելու պատճառով:

Հաջորդ ենթազուխը (**«Ինքնաճանաչողության միջակայքի միջավայրի ստեղծումը մամուլում»**) նվիրված է 1980-ականների վերջին սկսված հասարակական-քաղաքական փոփոխություններին, որոնք խթան հանդիսացան ազգային ոգու վերածննդի համար և որակվեցին որպես «էքնիկ ռենեսանս»<sup>40</sup>: Ինքնաճանաչողությանը նվիրված մամուլի հրապարակումները գոյաբանական մեծ նշանակություն ունեն ժամանակի մեջ: Դրանք ոչ միայն «ուրիշից» տարբերվելու խնդիր էին լուծում, այլև փորձում էին հարթել ապագայի ճանապարհը: Խորհրդային գաղափարախոսությունը ժխտելիս և սեփական «մենքը» վերասահմանելիս մամուլը հիմնվում էր ազգային արմատների, նախատիպերի, հավատի, «ոսկե դարի» մասին հիշողություններով անցյալի և նույն այդ անցյալից սնվող ապագայի վրա:

Ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից ազգային գիտակցությունն ու հոգեբանությունը «ինքնամաքման» ճանապարհի մեջ էին: Դեռևս վերակառուցման փուլում հայ ժողովրդի պատմությունը ոտնձգություններից զերծ պահելու համար կարևորվում են լեզուն, պատմական անուններն ու տեղանունները: Կոչ է արվում «վերականգնել մերը՝ բռնադատվածը, մոռացվածը»<sup>41</sup>: Մամուլը կարևորում է ազգային դաստիարակության խնդիրը, որը իրականանում էր ազգային գիտակցության, արմատների, նախատիպերի, պատմական հայրենիքի և էքնիկ ճանաչողության հիման վրա:

Ժամանակի մամուլը լի է «տիպական օրինակներով», որոնք, ըստ Մ. Էլիադեի, ժամանակակից հասարակության մեջ կատարում են միջին համապա-

<sup>37</sup> Ադամյան Ա., Մի սպաններ, «Ավանգարդ», 1993 թ., թիվ 8, 22 ապրիլի:

<sup>38</sup> Элиаде М. Мифы, сновидения, мистерии, Релф-бук, Ваклер, 1996, стр. 27.

<sup>39</sup> Там же.

<sup>40</sup> Հովակիմյան Գ., Ազգային ավանդույթների և սովորույթների հոգեբանություն, Եր., 2005, էջ 5:

<sup>41</sup> Մանուկյան Մ., Տեղանունը պատմություն է, «Սովետական Հայաստան», 1988թ., թիվ 241(20562), 5 հոկտեմբերի:

տասխան ֆունկցիա. «Հին ժամանակներում միֆոլոգիայի և պատմության մեջ ճեղք չի եղել: Պատմական անձինք փորձում էին նմանակել իրենց արքետիպերին, աստվածներին և միֆական հերոսներին: Իրենց հեթոթն, այս կերպարները օրինակ են դարձել հետագա սերունդների համար»<sup>42</sup>: «Անկախությունը» փնտրում, ներկայացնում է ազգային ընկալումների համահավաք նշանակություն ունեցող այնպիսի նախատիպեր, որոնք ինքնատիպ ու եզակի են՝ Վարդան Մամիկոնյան, Պավլիկյաններ, Փոքր Միեր և այլն<sup>43</sup>:

Ազգի պատմությունը ներկայացվում է մամուլի էջերում նաև արցախյան պատերազմի հերոսների կերպարների և հերոսական արարքների միջոցով:

Ազգի պատումում իր կարևոր տեղն ունի քրիստոնեությունը, որը դարեր շարունակ, պետական կրոն լինելուց զատ, հայի գոյատևման հիմնական խարխիսներից է եղել:

Նկատենք, սակայն, որ 90-ականների սկզբին հայ իրականության մեջ պարարտ հող էր ստեղծվել այլ շարժումների համար, որոնք ձգտում էին իրենց գաղափարախոսությունները դնել քաղաքական տեղաշարժերի հիմքում: Խարխուլ պետականության կամ սրա բացակայության պայմաններում ազգի գոյատևման համար արդյունավետ միջոց է դիտարկվում նեոհեթանոսությունը:

Հասարակությանը տարբեր պատումներ և մեկնաբանություններ ներկայացնող բոլոր շարժումների հույսը միֆական արթնացումներն էին, սակայն նրանք չկարողացան ձևավորել առանձին գաղափարախոսություններ և մնալ կայուն հրապարակի վրա: Ամեն դեպքում ընդունելին մնաց քրիստոնյա հայի կերպարը: Մամուլը հաճախակի անդրադարձավ քրիստոնեության թեմաներին, օգտագործեց միֆական վերածնության միջոցները՝ որպես պետական կրոն նրա դիրքերն ամրապնդելու համար, հատկապես ներկայացնելով հայ ազգը՝ որպես «առաջին քրիստոնեական նույնաբանություն»<sup>44</sup>:

Ամփոփելով նշենք, որ մամուլում էթնիկ ժառանգության սիմվոլների վերականգնումը միայն սահմանում և ներկայացնում է երկրի ազգայնական տրամադրությունները, որոնք, անշուշտ, պետք է դնել ժամանակակից ազգակառուցման համապատասխան նախագծում, կամ, ինչպես առաջարկում է տեսաբանը՝ «առաջնորդվել մշակույթի փոխակերպման («ոչ միայն լինելու, այլև դառնալու») կենարար հրամայականով»<sup>45</sup>: Ազգային ինքնությունը սահմանելու որոնումների ճանապարհին, սակայն, մամուլի էջերում չի ուրվագծվում նման նախագիծ:

Երրորդ գլուխը եզրափակվում է **«Առաջնորդի միֆական կերպարի ստեղծումը և միասնական միֆոլոգիայի ձևավորման խնդիրները մամուլում»** ենթաբաժնով:

---

<sup>42</sup> Элиаде М. Мифы, сновидения, мистерии, Ваклер, 1996, стр. 32.

<sup>43</sup> Աղաբաբյան Բ., Հայկական աշխարհընկալման նախաձևերի մասին, «Անկախություն», 1992թ., թիվ 51(262), հուլիսի 3:

<sup>44</sup> Այվազյան Ա., Հավատ, «Հայություն», 1992թ., թիվ 1, 14 փետրվարի:

<sup>45</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Բայառյան Հ., Լուսանցագրություն. քննադատական ազգայնականություն, «Հետք», 2012թ., 20 օգոստոսի:

Նույնիսկ զարգացած հասարակություններում պատմական ճգնաժամային պահերին ուժեղ առաջնորդ ունենալու պահանջ է զգացվում: Ա. Յուլաձեն նշում է, որ մտածողության հնագույն ձևերը ոչ միայն չեն նահանջում, այլև, ընդհակառակը, դառնում են իշխող այն դարաշրջանում, երբ «Աստված մահացել է»: Է. Կասիրերը այս քաղաքական գործիչներին անվանում է «միանգամայն իռացիոնալ և առեղծվածային կրոնի նոր հոգևորական»<sup>46</sup>: Այսպես բուլշևիկները ստեղծեցին իրենց կրոնական պաշտամունքը, որտեղ կենտրոնական կերպար դարձավ Լենինը: Չամոզմունքը, որ «երկրում ամեն ինչ կախված է պետության առաջին դեմքից», արդեն հուշում է, որ երկրում բոլոր խնդիրները կարող է լուծել միայն գերմարդը՝ օժտված անսահմանափակ իշխանությամբ<sup>47</sup>: Այս միջը կենսունակ է նաև այսօր, որը կարող է նախադրյալներ ստեղծել բռնապետության համար:

Այսպես՝ միջակայացնելով անհատ, երկրի տեր, ժողովրդի առաջնորդ ու ղեկավար հասկացությունները, մամուլը կարևորում կամ նսեմացնում է նրանց կերպարները ժամանակի մեջ: Այս առումով հատկանշական են «Հայք», «Երկիր» պարբերականների հրապարակումները: Առաջինը՝ որպես ՀՀԿ կուսակցության պաշտոնաթերթ, ամեն կերպ փորձում է փրկել նորաստեղծ պետականության միջը՝ ապացուցելով, որ երկրում ստեղծված իրավիճակի պատճառը ամենևին էլ նախագահը չէ, այլ դրանք հասարակարգի փոփոխության պայմաններում առաջ եկած տնտեսական անխուսափելի դժվարությունների արդյունք են՝ «անցումային շրջանի դժվարություններ»<sup>48</sup>:

Խնդիրը այլ ձևով է մեկնաբանում «Երկիրը». ՀՀԿ-ն, առավել ևս նրա ղեկավար-առաջնորդը մեղադրվում էր երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական դժվարությունների, իշխանական աթոռին տիրելու և երկիրը կործանման տանելու համար: Այս մթնոլորտը, ինչպես և ՀՀԿ-ի պառակտումը բերեց երկրի առաջնորդի միջակայն կերպարի հեղինակազրկմանը, նաև ապամիջակայնացմանը:

Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունները չկարողացան ստեղծել նոր իրավիճակին համապատասխան միջոցառում: Խորհրդային միջի դեմ պայքարի դուրս եկած և հաղթանակած միջը կառուցված էր անկախության, ազատության, հայոց պետականություն ունենալու գաղափարների հիմքի վրա և սնվում էր անցյալի փառապանծ դրվագներով՝ ոգեկոչելով ազգի հերոսական անցյալը: Այս միջը, սակայն, այլևս չէր կարող գոյատևել և չէր համապատասխանում երկրում ստեղծված նոր իրադրությանը:

Ստեղծված իրավիճակում հանրապետությունում ակտիվացան անցյալի նկատմամբ կարոտի տրամադրությունները: Ձանգվածային գիտակցության մեջ դեռևս կենդանի էին խորհրդային միջերը, որոնք ժողովրդի հիշողության մեջ

---

<sup>46</sup> Кассирер Э. Техника современных политеческих мифов, Политология. Хрестоматия, ред. М. А. Василик, Москва, 2000, стр. 580.

<sup>47</sup> Այս մասին տե՛ս Ըլադզե Ա. Политическая мифология. «Человекобоги», [www.novsu.ru](http://www.novsu.ru).

<sup>48</sup> Պեպանյան Ա., Անցումային շրջան. դժվարություններ, «Հայք», 1993 թ., թիվ 60 (213), 3 նոյեմբերի:

գուգակցվում էին «լավ ու առատ կյանքի», «լի տարիների» հետ: 1993-1995 թթ. մամուլի էջերում շատերը սկսեցին բարձրաձայնել անցյալին վերադարձի մասին: «Ինչո՞ւ և դեպի ո՞ւր» հարցերի պատասխանները տանում են դեպի Ռուսաստանի հետ վերամիավորում: «Պատմության մեջ լինում է այնպես, որ մարդիկ խնդրում են իրենց վերադարձնել «առևանգված» միջը»<sup>49</sup>, - նշում է Ա. Յուլաձեն: Իշխանության կամ ԶԳԻ-ի կերպարը կամաց-կամաց ազգային հերոսից վերածվում է «ապագային, ազգամերժ, հակազգային գաղափարախոսություն ու քաղաքականություն»<sup>50</sup> քարոզողի և իրականացնողի:

1994-1995 թթ. երկրում տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունների շարքում Զայաստանի Զանրապետության նոր Սահմանադրության ընդունման հետ կապված քննարկումներն են: Առաջին հայացքից նոր Սահմանադրության ընդունումը պետք է գաղափարական շարունակությունը լիներ 1980-ականների վերջին և 1990-ականների սկզբին տեղի ունեցած ազգային հակախորհրդային հեղափոխության: Սակայն հանրապետության նախագահի ելույթը ԳԽ ապրիլի 25-ի նիստում<sup>51</sup> պարունակում էր այնպիսի դրույթներ, որոնք ոչ միայն չնպաստեցին երկրում նոր և միասնական միջոցառմանի ստեղծմանը, այլև ավելի խորացրին հասարակություն-իշխանություն անդունդը: Վերոհիշյալ ելույթում «ազգային համաձայնությունը» և «ազգային գաղափարախոսությունը» համարելով կեղծ քաղաքական կատեգորիաներ՝ Լ. Տեր-Պետրոսյանը միջազգային է նաև 1980-ականների վերջի և 1990-ականների սկզբի Շարժումը, որի ղեկավարներից էր ինքը:

Երկրի նախագահի «Նոր ազգային ծրագիրը», սակայն, դատապարտված էր ծախողման, քանի որ չընկալվեց և համախմբող նշանակություն չունեցավ հասարակության համար: Զայաստանյան մամուլն այս «համամարդկային» ծրագրի և քաղաքականության հետ կապված, դեռևս 1992-1993 թթ. իր մտահոգությունն էր արտահայտել: Անտեսելով ազգայինի շուրջ հասարակության համախմբվելու, ազգայինին նախապատվություն տալու հասարակության ձգտումները և ցանկությունները, Լ. Տեր-Պետրոսյանը իր ելույթից հետո վերջնականապես դարձավ հայ ժողովրդի «ուրիշը»: Նրա «ազգային ծրագրի» դեմ արշավ սկսվեց մամուլի էջերում: Երկրի իշխանության և հասարակության միջև բացված գաղափարական անդունդը, բնականաբար, չէր կարող թույլ տալ, որ ստեղծվի միասնական միջոցառում:

Ատենախոսության վերջին՝ «**Եզրակացություններ**» բաժնում ներկայացված են մեր ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. Նախնադարյան հասարակության մեջ միջը եղել է մշակույթի և հասարակական կյանքի հիմքը, փոխանցել անհրաժեշտ ճշմարտություններ այն

<sup>49</sup> Այս մասին տե՛ս Ալլադզե Ա. Политическая мифология. «Похищение мифа», [www.novsu.ru](http://www.novsu.ru).

<sup>50</sup> Կեղծ ու ակեղծի հարաճուն արժարժանք, խմբագրական, «Երկիր», 1994թ., 28 ապրիլի, թիվ 78 (666):

<sup>51</sup> «ԶԳ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը ԳԽ ապրիլի 25-ի նիստում», «Հայք», 1994թ., թիվ 30 (258), 26-ը ապրիլի:

կազմակերպելու համար: Ի տարբերություն ավանդական միֆերի՝ նոր միֆերը հաճախ ստեղծվում են գրասեղանի շուրջ՝ նպատակ ունենալով ուղղորդելու հասարակական գիտակցությունը:

2. Միֆի, միֆաստեղծման խնդիրները լրջորեն հետաքրքրել են 20-րդ դարի խոշորագույն տեսաբաններին (Ռ. Բարտ, Է. Կասիրեր, Կ. Յունգ, Մ. Էլիադե և ուրիշներ), որոնց մոտեցումները, տեսակետները ուսանելի են նաև այսօր, հայ հասարակական կյանքի մերօրյա ընթացքին հետամուտ ուսումնասիրողների համար:

3. 1980-ականների վերջին կործանվեցին խորհրդային կայսրության մեջ առանցքային դեր ունեցող քաղաքական միֆերը, քողագերծվեցին անցյալի պատմությունները, պատվանդաններից իջեցվեցին արծանները՝ խորհրդանշելով խորհրդային պատմական նարատիվների սնանկությունը:

4. Նույն ժամանակահատվածում խորհրդահայ թերթերը դեռևս աշխատում էին խորհրդային միֆի «մոդեռնացման» օգտին: Սոցիալիզմի մասին միֆը փորձում էր վերածնվել՝ հենվելով «նոր մարդու» ֆենոմենի վրա: Այդ նպատակով ստեղծվեցին նույնիսկ «հայելային միֆեր»: Սակայն դրանք փլուզվող երկրի մամուլի վերջին հուսահատ ճիգերն էին:

5. 1988 թ. մամուլի էջերում ստեղծված միֆական միջավայրում իրենց հաստատուն տեղն ունեն կորստի զգացողության հիմքի վրա ծնված միֆերը՝ կապված Սումգայիթի, դեկտեմբերյան երկրաշարժի հետ: Այս իրողություններն օգտագործելով՝ խորհրդային քարոզչամեթոդներում փորձում էր վերակենդանացնել «եղբայրական ժողովուրդների» մասին և նման այլ միֆեր՝ իր գաղափարախտությունը կայուն պահելու համար: Միֆապայքարի դուրս եկած «Անկախությունը», սակայն, քողագերծում է դրանք:

6. Հին միֆի փլուզմանը զուգընթաց ստեղծվում էին նորերը, որոնք կառուցվածքային առումով որոշ նմանություններ ունեին հնների հետ: Դրանցից էր, օրինակ, որպես միֆական հերոս հանդես եկող «Ղարաբաղ» կոմիտեն, որը հիշեցնում էր խորհրդային «կոմիտե» կամ «կենտկոմ» հասկացությունները: Այն գործեց նույն կաղապարով, բայց արդեն նոր իրականության հրամայականով՝ «կոմիտե» բառին հավելելով «Ղարաբաղ» անվանումը:

7. Նոր միֆերի ստեղծումը մամուլում սերտորեն առնչվում է գոյապահպանական խնդիրներին, որոնք առաջին իսկ օրից Շարժման կենտրոնում էին: Նորանկախ հանրապետությունում ստեղծված ճգնաժամային իրավիճակում մամուլը մի կողմից պատերազմի ահազանգ էր հնչեցնում, մյուս կողմից ուղղորդում հասարակությանը, որը վտանգված գոյությունը պահպանելու երաշխիքներ էր որոնում: Սա միֆառևանգումների շրջան էր, երբ ատոմակայանի փակումը, ապա վերաբացումը պատճառաբանելով՝ գոյապահպանության մարտիկները, նույն միֆն «առևանգելով», պայքարի մի դաշտից մյուսը տեղափոխեցին: Եթե այն սկզբում գործում էր մթնոլորտի աղտոտվածության, ապա 4-5 տարի հետո՝ ազգային տնտեսությունն անկախ վարելու դիսկուրսի օգտին: Ստեղծվում էին նաև տեխնոլոգիական միֆեր, որոնցից մեկն այն էր, թե մենք ենք պահում Ռուսաստանին մեր կաուչուկով, ոսկով, մոլիբդենով:

8. Նորանկախ երկրի մամուլը զգալի տեղ է հատկացրել դժվարին իրավիճակներում հասարակության բարոյահոգեբանական պահվածքը կարևորող նյութերին: Այս տարիներին սոցիալական իրականությունը կազմակերպելու

համար անհրաժեշտ շատ միջեր դատարկվում են իմաստից, դադարում կատարել իրենց գործառույթը. ոտնահարվում է վերածնունդը, մաքուր «սկիզբը» խորհրդանշող Նոր տարվա միջը, ծառասպանությամբ անտեսվում են հինավուրց հավատալիքները բնության հետ մարդու ունեցած մտերմիկ կապի մասին:

9. 1990-ականների սկզբին հրապարակ են գալիս նոր միջեր, որոնց հիմքը կազմում են հայ ազգային գաղափարախոսությունը և Արևմուտքից ներդրված արժեքները: Ազգային ավանդական արժեքների վրա Արևմուտքի ազդեցության, ազգային՝ սերնդեսերունդ փոխանցումը վտանգված տեսնելու մտահոգություններով է ամբողջանում ժամանակի մամուլը: Նման համատեքստում են ընթանում նոր միջերի որոնումները:

10. Որոնումների այս փուլում մամուլում («Անկախություն», «Երկիր ավետյաց», «Երկիր», «Ազատամարտ», «Ավանգարդ», «Երեկոյան Երևան») կարևոր տեղ են գրավում մասնավորապես ազգային ինքնաճանաչողությանը նվիրված հրապարակումները: Դրանք ոչ միայն «ուրիշից» տարբերվելու խնդիր են լուծում, այլև փորձում են հարթել ապագայի ճանապարհը: Խորհրդային գաղափարախոսությունը ժխտելիս և սեփական «մենքը» վերասահմանելիս մամուլը հիմնվում է ազգային արմատների, նախատիպերի, հավատի, «ոսկե դարի» մասին հիշողությունների վրա:

11. Ժխտելով խորհրդային գաղափարախոսությունը, միևնույն ժամանակ գործելով նույն միջոցառական կաղապարի ներսում, մամուլը, սակայն, չկարողացավ ստեղծել նոր աշխարհակարգին համապատասխան միջեր՝ արժեզրկելով անկախության, ազատ երկրում ապրելու գաղափարը: «Ինչո՞ւ և դեպի ո՞ւր» հարցերը հնչեցին շատ պարբերականներում, որոնց պատասխանները երբեմն աղոտ, երբեմն էլ հստակորեն տանում էին դեպի ետ՝ անցյալ: Ըստ այդմ էլ չձևավորվեց ապագայի միջոցառում:

12. Ազգային պետության կառուցման գործում թե՛ ազգայնականների, թե՛ իշխանամետ մամուլի մոտեցումներում ակնհայտ են ծայրահեղությունները: Վերջիններն առաջարկում էին պետության կառուցման սեփական նախագիծը՝ հիմնված միայն մարդու իրավունքների և արևմտյան այլ արժեքների վրա: Նրանք չէին կարևորում, ավելին, անտեսում էին ազգային գաղափարախոսության դերն ընդհանրապես: Մինչդեռ անհրաժեշտ էր այս երկուսի համադրումը՝ երկրում միասնական գաղափարաբանություն ստեղծելու համար:

## ԱՍԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

1. **Վերակառուցումը և հին միջի կործանման լուսաբանումը հայ մամուլում (1988-1995թթ.)**, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2013, 1-2, էջ 131-136:

2. **Միջաստեղծումը Հայաստանյան մամուլի էջերում (1988-1995 թթ.)**, «Հայ գրատպության 500-ամակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու 3, հասարակական գիտություններ (իրավագիտություն, ժուռնալիստիկա)», Երևան, ԵՊՀ հրատ., 2013թ., էջ 324-329:

3. **Նոր միջերի ստեղծումը հայաստանյան մամուլում (1988-1995 թթ.)**, Երևան, 2014, 59 էջ:

САРГСЯН ЗАРУИ ДЖИВАНОВНА

МИФОСОЗДАНИЕ В СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ПРЕССЕ (1988-1995 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.06 “Журналистика”

Защита состоится 11 июня 2014 года, в 14<sup>30</sup> на заседании специализированного совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу Ереван, ул. Хачатура Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

### РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению мифосоздания в армянской прессе в период с 1988 по 1995 годы. Целью данного исследования является анализ мифотворчества как важного фактора в формировании советско-армянской идеологии, а также роли мифов в укреплении позиций действующего правительства.

Работа состоит из Введения, трех глав (с соответствующими подзаголовками), заключения и Библиографии.

Во Введении обоснована теоретическая и практическая значимость проблемы, её актуальность, определены цель исследования и ее задачи. Здесь же представлены методологические основы работы и принципы, позволяющие обеспечить системный подход.

В первой главе, (“Миф, и его место в истории культуры”), рассматривается феномен мифа, ход его исторического развития, представлены основные подходы и методы выдающихся теоретиков в этой области. В первой подглаве (“Миф: терминологическое и смысловое значение”) кратко представлены общие и теоретические аспекты мифа как культурного феномена. В следующей подглаве (“Миф: процесс развития по историческим этапам”) исследован пройденный путь мифа. В третьей подглаве (“Основные подходы и методы анализа мифа”) рассматриваются теоретические и методологические подходы в исследованиях мифосоздания. Для определения и правильного понимания мифов исследуемого периода были исследованы теории и методы, разработанные Э. Касирером, Р. Бартом, К. Юнгом, М. Элиаде и другими. Разработка упомянутого материала послужила основой для следующей подглавы данной диссертации (“Исследование исторического периода в контексте мифологии”). В этой части исследования рассматривается период 1988-1995 годов, который является особо важным периодом в истории армянского народа.

Вторая глава (“Разрушение древних мифов в средствах массовой информации”) посвящена перестройке и разрушению советского мифа, а также проблемам, связанных с борьбой между старыми и новыми мифами. Здесь же рассматриваются различные мифы, созданные прессой и используемые в качестве ориентира для формирования общественного сознания. Это явление особенно стало заметно в годы перестройки Горбачева, когда средства массовой информации работали над “модернизированием советских мифов”. Однако в период перестройки и гласности начался процесс советской демифололизации.

Третья подглава (“Перестройка и разрушение старого мифа”) посвящена роли СМИ в разрушении советских и перестроечных мифов. Именно в этот период народы, проживавшие в Советском Союзе, начали отделять свое “мы” от советского общего “мы”.

В следующей подглаве (“Борьба новых и старых мифов в СМИ”) анализируется борьба старых и новых мифов в первые годы новой независимой республики. В частности, представлена борьба между комитетом “Карабах” и Компартией, у которой был 70-летний опыт работы.

В третьей главе (“Создание новых мифов в средствах массовой информации”) исследуются проблемы, возникшие при создании новых мифов, которые изменили систему моральных ценностей общества. На этом фоне в стране активизируются ностальгические настроения по прошлому. Параллельно этому начинается процесс поиска новых мифов, создание которых становится необходимым для организации социальной и политической жизни независимой республики.

В первой подглаве (“Вопросы самосохранения и проблемы создания мифов в СМИ”) рассматриваются движение самосохранения, начавшееся в 1988 г., а так же задачи, которые связаны с созданием мифов в прессе для отвлечения общественного внимания.

Следующая подглава («Создание мифической среды самопознания в печати») посвящена начавшимся в конце 1980 года социально-политическим изменениям, которые стимулировали возрождение национального духа. При отрицании советской идеологии и пересмотра своего “мы” СМИ основывались на национальных корнях, прототипах, вере, воспоминаниях о “золотом веке” и ссылались на будущее, основываясь на прошлом.

В третьей главе (“Создание мифического образа лидера и формирование совместной мифологии в прессе”) рассматривается проблема наличия сильного лидера в период кризиса исторической важности, а так же анализируется негативное влияние демифололизации на государственность. Наряду с этим в вышеупомянутом периоде провалились попытки создания единой мифологии.

В Заключении обобщаются основные результаты исследования, сформулированные по ходу изложения материала.

**ZARUHI J. SARGSYAN**

**THE CREATION OF MYTHS IN CONTEMPORARY  
ARMENIAN PRESS /1988-1995/**

**Philology PhD thesis, specialty 10.01.06 "Journalism"**

**Defense day: 11 June, 2014, 14<sup>30</sup> pm at the session of the VAK Specialized Council  
(Supreme Certifying Commission) 012 under Yerevan State University**

**Address: Republic of Armenia, Yerevan, 52/A Abovyan st.,  
YSU, Faculty of Philology, room N 202**

**SUMMARY**

This research is an attempt to study the creation of myth as the basis of the Soviet Armenian ideology and its nature, consider the myths aimed at helping the authorities to hold the power as well as to tackle the creation of myths in the present-day press.

The thesis consists of the Introduction, three chapters with subsequent subchapters, Conclusions and Bibliography.

The Introduction deals with the necessity of the scientific study of the issue and its novelty, the aim and object, methodological grounds and principles which enable to present the material in a systematized way.

In the first chapter entitled 'Myth and Its Place in the History of Culture' the phenomenon of myth and its development through historical periods have been examined and the basic approaches and methods of the prominent theorists have been presented. The first subchapter entitled "The Myth: Its Terminological and Semantic Significance" deals with the history of the phenomenon and general view of its theoretical structure. The second subchapter 'Historical Development of the Myth' is an attempt to present a historical review of the myth. In the third subchapter 'Main Methods and Approaches to Analyze the Myth' there have been presented methodological and theoretical approaches to the issue. The theories and methods by E. Cassirer, R. Barthes, C. Jung, M. Eliade have been taken into consideration to reveal and to understand the myth. The aspects discussed in the chapters above have served as the basis for the subchapter "The Given Historical Period in the Context of Mythology" where the crucial period of 1988-1995 in the history of Armenia has been presented.

The second chapter "The Destruction of Myths in the Press" is devoted to the destruction and reconstruction of the Soviet myth and it also discusses the issues revealed during the collision of the old and new myths. Various myths created and used by the press to orient social consciousness have been examined. This fact became especially apparent during Gorbachev's Perestroika when the press tried to "modernize the soviet myth". However, the "demythologization" of what was considered to be Soviet started exactly with the publicity policy offered by Perestroika. In the first subchapter "Perestroika and Destruction of the Old Myth" there has been shown how the press using the opportunities given by Perestroika

revealed the senselessness of the Soviet myth as well as of the myth of Perestroika. The soviet people attempted to define its own “we” by distinguishing from the “we” of the Soviet Union. The following subchapter “Mythical Struggle of the Old and New in the Press” there has been discussed the struggle of the old and new myths in the new independent state. In this context the struggle of myths of “Karabakh” commission and seventy-year old Communist Party has been presented.

In the third chapter “The Creation of New Myths in the Press” there have been examined the issues revealed in the process of creation of the new myths which brought about certain changes of moral and psychological values of the given society. At the same time there started the search for some new myths which could encourage the new independent state to mould new social and political life in the new independent republic. The first subchapter entitled “The Problems of Survival and the Creating Their Myths in the Press” deals with the movement for survival and the related myths that appeared in the press to divert public attention.

The following chapter “Creation of Mythical Environment of Self-Consciousness in the Press” is devoted to public and political changes at the end of the 1980s and they fostered the revival of national spirit. When rejecting soviet ideology and redefining the “we” the press took its stand on the memories of national roots, prototypes and “golden age” and the future which is based on this past.

The third chapter “Creation of Mythical Image of a Leader and the Issues of Creation of Joint Mythology in the Press” tackles the issue of demythologization of the leader’s image in the periods of historic crises and how important is the existence of a strong leader. At the same time they failed the attempts to create a unified mythology.

In “Conclusions” the basic results of the research have been summarized.

